Ա. ԳԱՅԴԱՐ

ՉՈՐՐՈՐԴ ԾԵՐՏԱՓԱԿԸ

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1937

Ա/394

Ի 3-3152

Ա. ԳԱՅԴԱՐ

ՉՈՐՐՈՐԴ ՇԵՐՏԱՓԱԿԸ

Նկարները՝ Պ. ԱԼՑԱԿՐԻՆՍԿՈՒ

Ռուս. թարգմ. Հ. Հայրապետյան

4594
Ա II 35680

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՊԵՏՀՐԱՏ 1937 ԵՐԵՎԱՆ

Կոլկան յոթ տարեկան եր, Նյուրկան՝ ութ, իսկ Վասկան՝ դեռ վեց։

Կոլկան ու Վասկան հարևաններ էին։ Այն ամառանոցները, ուր նրանք ապրում էին, կողք-կողքի էին։ Նրանց բաժանում եր ցանկապատը, իսկ ցանկապատի մեջ մի անցք կար։ Այդ անցքով յերեխաներն իրար մոտ հյուր էին գնում։

Նյուրկան ապրում եր դիմացի շենքում։ Սկզբում տղաները Նյուրկայի հետ չեյին մտերմանում։ Նախ՝ այն պատճառով, վոր նա աղջիկ եր և յերկրորդ, վորովհետև Նյուրկայենց բակում մի շան բուն կար, մեջը մի չար շուն և յերրորդ, վորովհետև նրանք յերկուսով էլ ժամանակն ուրախ էին անցկացնում։

Բայց հետո մտերմացան, ահա թե ինչպես։

Մի անգամ Մոսկվայից Վասկայի մոտ յեկավ նրա մտերիմ ընկեր Իսայկա Գոլդինը։

Իսայկան Վասկային հասակակից եր և նման եր նրան։ Միայն քիչ հաստ եր, մազերն էլ Վասկայի մազերից ավելի սև էին, մեկ էլ Իսայկան մի հրացան ուներ, վոր կրակում եր խցանով, իսկ Վասկան՝ չուներ։

Իսայկան յեկավ հանգստի որն իր հոր հետ։ Յեվ յերեխաները մտածեցին գնդաթի խաղալ։ Իսկ գնդաթին, հայտնի բան է, յերկու հոգով չեն խաղում, այլ անպատճառ չորս հոգով։

Գնացին Պավլիկ Ֆոմինի հետևից։ Բայց Պավլիկի վորը ցավում եր։ Զթողեցին, վոր գնդաթի խաղա, նա տանը տխուր նստած եր, վորովհետև քիչ առաջ լուծողական եր խմել։

Ի՞նչ անեյին։ Զորրորդին վո՞ր տեղից գտնեյին։

Ցեվ ահա Վասկան ասաց Կոլկային.

— Ի՞նչ կլինի, արի Նյուրկային կանչենք.

— Կանչե՛նք,— համաձայնեց Կոլկան:— Նրա վոտները այնքան յերկար են վո՛ր, նա այծից վատ չի վազում:

Իսայկան ել համաձայնեց:

— Միայն թե,—ասաց Իսայկան,—թեև իմ վոտները կարճ են, բայց յես ել եմ լավ վազում, վորովհետև Նյուրկան առանց ցատկոտելու յե վազում, իսկ յես՝ ցատկոտելով:

Նուրկային կանչեցին:

— Արի, Նյուրկա, մեզ հետ գնդաթի խաղա:

Նյուրկան սկզբում շատ զարմացավ, բայց հետո տեսավ, վոր յերեխաները լրջորեն են կանչում:

— Ցես կգայի, բայց առաջ պետք է վարունգը ջրեմ, թե չե արեգակը դուրս կգա, չիթիլները կթառամեն:

Ցերեխաները տեսան, վոր վարունգ. ջրելը յերկար կտեվի: Այն ժամանակ Իսայկան ասաց.

— Ցեկեք մենք ել ջրենք: Վոմանք ջուր կկրեն, վոմանք կջրեն և այն ժամանակ շուտ կպրծնենք: Թե չե նա մենակ մինչև կեսոր հազիվ կպրծնի:

Այդպես ել արին: Տասն անգամ գնդաթի խաղացին: Վազեցին գետը լողանալու: Հետո Իսայկան իր հոր հետ քաղաք գնաց:

Ցեվ ահա, այդ որվանից Վասկան ու Կոլկան Նյուրկայի հետ ընկերացան:

Նրանք ապրում եյին Մոսկվային մոտիկ մի փոքրիկ գյուղի ծայրում: Այդտեղից սկսվում եր դաշտը, վորտեղ մանր թփեր եյին աճում: Իսկ ավելի հեռու, բլրի վրա, յերևում եյին մի ջրաղաց, մի յեկեղեցի և մի քանի տուն՝ կարմիր տանիքներով—կայարան եր, թե գյուղ — հեռվից ջոկել չեր լինում: Մի անգամ Վասկան հորը հարցրեց, թե ինչպես ե կոչվում այդ գյուղը:

— Այդ իսկական գյուղ չե,—պատասխանեց հայրը,—այդ բոլորը դիտմամբ ե շինված:

— Ինչպե՞ս թե իսկական չէ,—զարմացավ Վասական։ Ինչպե՞ս թե իսկական չէ, յերբ և՛ ջրաղաց կա, և՛ յեկեղեցի, և՛ տուն։ Բոլորը յերևում են։

— Այնպե՛ս, իսկական չէ,— ծիծաղեց հայրը։ Այստեղից թվում է, թե և՛ ջրաղաց կա, և՛ տուն... Իսկ յեթե մոտենաս, բան չկա։

Վասական զարմացավ, բայց չհավատաց։ Ցեվ վոռոշեց, թե հայրիկը ծաղրեց իրեն, կամ հենց այնպես ասաց, վոր իրենից ձեռք քաշեմ։

Ցանկապատի անցքով նա գնաց Կոլկայի մոտ։ Տեսավ, վոր Կոլկան ու Նյուրկան ցանկապատի վրա նստած, դաշտում ինչ վոր հետաքրքիր բանի յեն նայում։ Վասական նեղացավ։

— Եղ ի՞նչ է, դուք հետաքրքիր բանի յեք նայում, իսկ ինձ չե՞ք կանչել։

Կոլկան պատասխանեց.

— Ցես վաղուց եյի ուզում վազել քո յետևից։ Շուտ բարձրացիր ցանկապատի վրա։ Նայիր, թե ինչպիսի կարմիր բանակայիններ են յեկել, թնդանոթներով։

Վասական բարձրացավ և տեսավ, վոր հենց իրենց կողքին, թփերի մեջ ձիեր են կանգնած, յերկու անիվանի սայլակներ և թնդանոթներ։

— Լա՛վ, լա՛վ,— ասաց Վասական։— Հետո ի՞նչ է լինելու վոր։

— Ա՛յ, կտեսնենք,—պատասխանեց Նյուրկան։— Մենք այստեղ վաղուց ենք նստել և սպասում ենք.

— Լա՛վ,— հիշեցրեց նրան Վասական։— Ուրիշ անգամ յես ել ձեզանից շուտ կգամ կնստեմ և ձեզ վոչինչ չեմ ասի։

Բայց և այնպես այս անգամ նրանք չկռվեցին, վորովհետև թփերում ինչ վոր ուշագրավ բան եր սկսվում։

Ամեն մի թնդանոթի մոտ վեց ձի կար—յուրաքանչյուր թնդանոթին յերեք զույգ։ Հանկարծ ձիերին թնդանոթներից խրձակեցին։ Կարմիր բանակայինները թնդանոթների մոտ վազվզեցին, մի ինչ վոր բան

պտտեցին, շուռ տվին, հետո դեպի յետ վազեցին։ Թնդանոթի կողքին միայն մեկը մնաց։ Այդ մեկի ձեռքին կար մի յերկար թել, վորը կապված եր թնդանոթից։

— Կոլկա, դու չգիտե՞ս, թե ինչո՞ւ յե թելը բռնել,—հարցրեց Վասկան ավելի հարմար նստելով։

— Չգիտե՛մ,— խոստովանեց Կոլկան, բայց, յեթե բռնել է, ուրեմն այդպես ել հարկավոր է։

— Անպատճառ այդպես ել հարկավոր է,—հաստատեց Նյուրկան։

— Իսկ յեթե չբռներ, այն ժամանակ ի՞նչ կլիներ,— շարունակեց Կոլկան։

Իսկապես,— համաձայնեց Վասկան,— յեթե չբռներ, այն ժամանակ ի՞նչ կլիներ...

Բայց այդ բոպեյին կարմիր բանակայինների հրամանատարը, վոր կանգնած եր հեռախոսի խոսափողի յետևը, բարձր ձայնով ինչ-վոր բան դոռաց։

Մյուս հրամանատարը, վոր Թնդանոթին ավելի մոտիկ եր կանգնած, նույնպես մի բան դոռաց, ձեռքը թափ տվեց։ Այն ժամանակ կարմիր բանակայինը թելը քաշեց։

Առաջ մի մեծ կրակ փայլատակեց, հետո այնպես վորոտաց, վոր կարծես կայծակը խփեց ուղիղ վառոդանի խողովակի գլխին։

Ցերեխաները ցանկապատից ցած թռան խոտի վրա։

— Ամա գրմփաց հա՛,— ասաց Վասկան բարձրանալով։

—Շա՛տ զոռ գրմփաց,— համաձայնեց գունատված Նյուրկան։

Այ, յերբ այդ թելը քաշում են, այն ժամանակ ել գոռում է,— բացատրեց Կոլկան։— Իսկ դուք ասում եք թելն ինչի՛ համար է, ինչի՛ համար է։ Ցես հիմա միանգամից գլխի ընկա, թե ինչի համար է... Բայց ասա, Վասկա, ինչո՞ւ դու ցանկապատից վայր ցատկեցիր և ինձ ու Նյուրկային ել հրեցիր։

Հենց իրենց կողքին, թփերի մեջ, ձիեր են կանգնած,
յերկու անիվանի սայլեր ու թնդանոթներ:

— Ցես չցատկեցի,—նեղացավ Վասկան,—առաջ Նյուրկան ցատկեց, ցանկապատը ցնցեց, յես էլ ընկա։

— Ցես առաջ չցատկեցի,—հրաժարվեց Նյուրկան։ — Ցեթե յես ամենից առաջ ցատկեցի, հապա ինչպե՞ս ընկա Կոլկայի մեջքի վրա։ Նա ինքն է առաջ ցատկել։

— Ա՜յ քեզ բան,—բարկացավ Կոլկան։—Դու ուղղակի վախեցար, թե յեղինջի մեջ կընկնես և դիտմամբ այնպես արեցիր, վոր մեջքիս ընկնես։ Իսկ, ա՛յ, յես չվախեցա և վողջ ձեռքս յեղինջը ծակծկոտեց, այրեց։

Ցեվ դառնալով դեպի Վասկան, ավելացրեց.

— Նրանք բոլորն էլ—աղջկերքը յեղինջից վախենում են։

Այդ որվանից կարմիր բանակայինները հաճախ եյին գալիս իրենց թնդանոթներով։ Միայն չորեքշաբթի և յերկուշաբթի որերը հրաձգություն չեր լինում, թե չե մյուս որերը լինում եր։

Հենց վոր հրետանավորները գալիս եյին, յերեխաները վազում եյին թփերի մոտ։ Նստում եյին բլրակի վրա, բոլորովին մոտիկ և նայում։ Բլրակից ամեն ինչ տեսնում եյին ու լսում։

Հեռախոսիչը լսում եր լսափողով և հետո ասում հրամանատարին։

— Նշանոց 6–5, փող 7–2։

Այն ժամանակ հրամանատարը գոչում եր.

— Ցերկրորդ հրանո՛թ։ Նշանոց 6–5, փող 7–2։

Ցեվ կարմիր բանակայիններն իսկույն վազում եյին յերկրորդ թնդանոթի մոտ։ Ինչ վոր մի անիվ եյին պտտեցնում և թնդանոթի փողը մի քիչ բարձրանում եր։ Մի ուրիշ անիվ եյին պտտեցնում, թնդանոթի փողը մի կողմ եր քաշվում։ Ցեվ յերբ հրետանավորը նշան եր առնում, հրամանատարը ձեռքը թափ եր տալիս և նշանառու—կարմիր բանակայինը թելը քաշում եր։ Ցեվ ահա՝ դրմփոց–դրմփոց։

Թե ինչպես է թռչում արկը, յերեխաները չեյին տեսնում։ Իսկ յերբ տեղ եր հասնում և պայթում, այն

ժամանակ տեսնում էին, վորովհետև դիպած տեղում փոշու ամպ և սև ծուխ էր բարձրանում:

Ցեվ բոլոր արկերը պայթում էին յերբեմն յեկեղեցու մոտ, յերբեմն ջրաղացի, յերբեմն էլ տնակների մոտ, վորոնք յերևում էին հեռու բլրակի վրա:

— Սարսափելի կլինի այն գյուղում ապրելը,—մի անգամ ասաց Նյուրկան:—Ցես վոչ մի կերպ այնտեղ չէլի ապրի: Իսկ դո՞ւ, Վասկա:

— Ցես էլ չէլի ապրի,—պատասխանեց Վասկան:—Իսկ ինչո՞ւ հայրիկս ասաց, վոր այնտեղ վոչ մի գյուղ չկա, և միայն այստեղից թվում է թե կա:

— Գյուղ կա,—վորոշեց Կոլկան,—միայն թե հրաձգությունից առաջ բոլորը հեռանում են այնտեղից:

— Իսկ ձիերը:

— Ձիերին էլ են տանում:

— Կովերն ե՞լ,— հարցրեց Վասկան:

— Կովերն էլ, խոզերն էլ, վոչխարներն էլ:

— Հավերն էլ ե՞ն տանում,— հետաքրքրվեց Նյուրկան:— Բաղերն ե՞լ: Բոլորի՞ն:

— Պետք է վոր բոլորին,—պատասխանեց Կոլկան ու լռեց, վորովհետև իր համար էլ այդ բանը տարորինակ էր:

Այդ բոպեին հրաձգությունը վերջացավ, կարմիր բանակայիններին համար բերին անիվների վրա դրված կաթսա—խոհանոցը: Խոհարարն սկսեց նրանց ամաններն ինչ վոր բան լցնել — արգանակ, թե բորշչ, և կարմիր բանակայինները նստում էին այնտեղ, խոտերի վրա և ուտում:

Այդ ժամանակ Վասկան ասաց.

— Վազենք տուն, յես էլ ուտել եմ ուզում:

Բայց Կոլկան նրան պահեց.

— Քիչ սպասիր. հրամանատարն այստեղ է գալիս:

Հրամանատարը ձիու վրա նստած մոտ յեկավ: Ցեվ հենց բլրակի մոտ կանգնեց. Ծխել էր ուզում: Ծխախոտը հանեց, լուցկի հանեց, սկսեց վառել, բայց շնաճանճը խայթեց ձիուն, թե հենց ինքն էր խաղ անում, միայն թե ձին իրեն թափահարեց և փնչացրեց:

Հրամանատարը սանձը բռնեց։

— Կանգնի՛ր,—ասում է,—չարաճճի, ի՞նչ ես պտույտ-պտույտ գալիս։—Իսկ լուցկին ձեռքից ընկավ

— Ցերեխանե՛ր,—խնդրեց հրամանատարը,—լուցկին տվեք։

Վասկան ամենից մոտ էր։ Տուփը վերցրեց, բայց սայթաքեց ու վայր ընկավ։ Կոլկան նեղացավ, վոր Վասկան է ուզում տալ։ Վազեց ու նրա ձեռքից տուփը չանթեց։ Վասկան գոռաց և բռունցքով խփեց նրա գլխին։ Այստեղ կռիվն սկսվեց։ Իսկ Նյուրկան այդ ժամանակ կամաց մոտեցավ, լուցկիները հավաքեց ու տվեց հրամանատարին։ Ա՛յ քեզ սուտիկ—փուտիկ աղջիկ։

Հրամանատարը յերեխաների վրա ծիծաղեց, ասաց «շնորհակալություն» ու սլացավ։

Այդ ժամանակ Վասկան ու Կոլկան կռիվը դադարեցրին և ուղեցին Նյուրկային զսկել, վոր լուցկին նա տվեց հրամանատարին։

Բայց Նյուրկան վախեցավ ու փախավ։ Են յերկար վոտնանուն կարո՞ղ ես հանել։

Ցեվ այսպես յերեխաները կռվեցին։

Մյուս որը ցանկապատի անցքով վոչ Վասկան դընաց Կոլկայի մոտ, վոչ էլ Կոլկան Վասկայի մոտ։ Նյուրկան էլ իրենց բակում զբաղված էր։

Վասկան իրենց բակում ման յեկավ, ման յեկավ, տեսավ ճանճրալի յե։ Մի փայտ գտավ, ձի արավ, նստեց վրան և բակի շուրջը յերեք անգամ պտտվեց, տեսավ միևնույն է, ճանճրալի յե։ Անցքից մտիկ արավ, տեսավ, վոր Կոլկան նետ-աղեղը ձեռքին պտտվում է։ Գլխարկին էլ փետուր է անց կացրել, իբրև թե հընդիկ է։ Վասկան նեղացավ։ Գլուխն անցքից հանեց ու գոռաց.

— Կոլկա՛, տո՛ւր փետուրը։ Քոնը չէ, մերն է։ Դու մեր աքլորի պոչիցն ես հանել։

Կոլկան մարգից մի գունդ հող վերցրեց, խփեց Վասկայի փորին։ Թեև չցավեց, բայց այնուամենայնիվ լաց յեղավ։

Վասկայի մայրիկը դուրս յեկավ պատշգամբը և



իսկ Նյուրկան լուցկիները հավաքեց և տվեց հրամա-
նատարին։

սկսեց Կոլկային հայհոյել։ Միաժամանակ Վասկայի վրա էլ նեղացավ։ Ցերկրորդ որը յերեխաներն իրար թշնամի եյին։ Ցերրորդ որը նույնպես։

Հենց այս ժամանակ սունկ հավաքելու որերը հասան։ Հարևան փողոցի յերեխաներն առավոտից հավաքվում եյին ու գնում Բարկովյան անտառը, կամ Հանդարտ ձորակը։ Մեկ էլ տեսար ճաչին սունկ են բերում — մինը մի կողով, մինը մի զամբյուղ։ Այն էլ ի՞նչ սունկ... — բոլորն էլ սպիտակ։ Շաքար են, վոչ թե սունկ։

Իսկ Վասկան մենակ չեր գնում, ճանձրալի կլիներ։ Կոլկան էլ չեր գնում։ Իսկ Նյուրկան՝ ավելի ևս. մենակ ճանձրալի յեր։

Մի անգամ Վասկան իրենց բակում գնացք եր խաղում։ Նրա շոգեշարժն իսկական շոգեշարժ չեր, այլ արկղներից եր շինված, բայց այնուամենայնիվ հետաքրքրական եր։ Ինքնայեռի մի հին խողովակ եր հարմարեցրել ու փչում եր. դու–դո՛ւ–ու–ո՛ւ։ Իսկ ինքը տատանվում եր։ Արկղները թեև առաջ եյին գնում, բայց դիպչում եյին իրար. տա՛կ–տո՛ւկ, տա՛կ–տո՛ւկ։ Ուղղակի վագոնների պես։

Հանկարծ Վասկան լսեց, վոր կողքին մի բան ընկավ։ Տեսավ՝ նետ է։ Հետո տեսավ, վոր Կոլկան գըլուխն անցքից հանել է։ Ափսոսում եր Կոլկան, վոր պատահաբար նետը Վասկայենց բակն ընկավ և վախենում եր, վոր գնա բերի։

Վասկան նայեց ու ասաց.

— Կոլկա՛, ուզո՞ւմ ես նետդ տամ։

Շոգեքարշից ցած իջավ, նետը վերցրեց ու տվեց Կոլկային։

Կոլկան նետը վերցրեց և վոչինչ չասելով, գնաց։

Ման յեկավ, ման յեկավ, կրկին գլուխն անցքից հանեց ու գոչեց.

— Կոլկա, յես կոնդուկտորի սուլիչի նման սուլիչ ունեմ, ուզում ես, տամ՝ փչիր, բայց ելի հետ կտաս։

Կոլկան սուլիչը բերավ ու մնաց Վասկայենց բակում։ Խաղալուց հետո պայմանավորվեցին, վոր առավոտյան գնան սունկ հավաքելու։

Կոլկան մոտեցավ ցանկապատին և գոչեց.

— Նյուրկա, վաղը կգա՞ս գնանք սունկ հավաքելու:

Իսկ Նյուրկան վախեցավ:

— Դուք, — ասաց, — ելի կկռվեք:

— Բա՞ն ասացիր... կռվել: Մենք սրիկանե՞ր ենք, ի՞նչ է: Միայն սրիկաներն են ամեն որ կռվում: Իսկ մենք միթե՞ ամեն որ կռվում ենք:

Այդպես ել հաշտվեցին:

Վասկան անգրագետ եր: — Դեռ պատիկ եր: Իսկ Կոլկան մի քիչ կարդալ-գրել գիտեր: Ցերեկոյան, քընելուց առաջ, մոտեցավ որացույցին, թերթիկը պոկեց և կարդաց. «Ցերեքշաբթի»: Նայեց հետևյալ թերթիկին և կարդաց. «Չորեքշաբթի»:

«Եղուց արդեն չորեքշաբթի յե», մտածեց Կոլկան և իրեն գովեց: «Սառավոտյան պիտի սունկ հավաքել դնանք, պետք և շուտ պառկել: Ժամի 6-ին պետք վեր կենալ:

Կոլկայի քնելուց հետո հայրիկը վերադարձավ ի վոր ժողովից: Նա նայեց որացույցին և հարցրեց.

— Միթե՞ վաղը չորեքշաբթի յե:

— Վո՛չ, — պատասխանեց մայրիկը, — վաղը յերեքշաբթի յե: Կոլկան սխալմամբ ավելորդ թերթիկ է պոկել և ստացվել է, վոր վաղը չորեքշաբթի յե:

Ցերևի, Կոլկան և Վասկան քնով կանցնեյին, յեթե Նյուրկան նրանց չարթնացներ:

Արեգակը դեռ նոր եր դուրս յեկել, խոտը թաց եր և սկզբում բոբիկ վոտները մրսում եյին:

Ուղղվեցին դեպի անտառակը:

Բայց այնտեղ սունկ քիչ կար և յերեխաները վորոշեցին ծռվել դեպի Հանդարտ ձորակը, վորտեղ թերեն ավելի խիտ եյին և տեղը՝ չոր:

Նյուրկայի և Կոլկայի կողովներում արդեն մի քանի սունկ կար, իսկ Վասկայի կողովում դեռ վոչ մի հատ չկար:

— Նյուրկա, դու իմ կողքից մի գնա, — խնդրեց նա, — թե չե ինձանից առաջ ես սունկը պոկում: Մի

քիչ հեռու գնա, առանձին տեղ պոկոտիր։

— Իսկ դու ուշադիր յեղիր, — պատասխանեց Նյուրկան, մտավ թփերի մեջ և այնտեղից մի մեծ սունկ պոկեց։ — Նայիր, թե ինչպիսի սունկ չկարողացար տեսնել։

— Ցես հենց ուզեցի թփի յետևը նայել, իսկ դու այնտեղից դուրս թռար, — պատասխանեց Կոլկան։

Սակայն շուտով, յերբ հասան Հանդարտ ձորակները, այնքան սունկ կար, վոր մինչև անգամ Վասկան եվ շատ սունկ հավաքեց։

Այդպես նրանք յերկար ժամանակ թափառեցին թփերի մեջ, արդեն արեգակը բարձրացավ, բացատնեռում ցողը գոլորշիացավ, յերբ դուրս յեկան անտառի ծայրը։

— Մի տեսեք, մի տեսեք, յերեխաներ, թե վորտեղ հասանք, — ասաց Կոլկան։

Բարձր թփուտը վերջացավ։ Այնուհետև, վորքան աչքը կտրում եր, նրանց առաջ տարածված եր բլրոտ, մացառներով ծածկված դաշտը։ Ցեվ այդ դաշտով վոչ մի ճանապարհ չեր անցնում, ամեն տեղ թփեր եր ու խոտ։ Այնտեղ ցցված եյին մի քանի բարձրը փայտե աշտարակներ, վորոնց վերևի մասում դատարկ հրապարակներ կային։ Իսկ աջ կողմում, մի կիլոմետրից վոչ հեռու, յերեխաները տեսան այն գյուղը, ջրաղացն ու յեկեղեցին, վորոնք յերևում եյին իրենց գյուղի ծայրից։

— Գնանք նայենք, — առաջարկեց Կոլկան։ — Կըտեսնենք միայն, իսկ հետո կլինենք սարի տակը, ուղիղ կգնանք և տուն կհասնենք։

— Իսկ յեթե հանկարծ կրակել սկսեն։

— Իսկ յեթե կարմիր բանակայինները դա՞ն, — համարյա միաձայն հարցրին Վասկան ու Նյուրկան։

— Այսոր չեն դա։ Այսոր չորեքշաբթի յե, — հանդգնստացրեց նրանց Կոլկան։ Տեսնենք, գնանք տուն։

Նրանք պետք ե անցնեյին խորդուբորդ դաշտով։ Ցեվ վորքան մոտենում եյին, այնքան ավելի հաճախ եյին հանդիպում թարմ, դեռևս խոտով չծածկված

թմբերի, նեղ ու խոր առուների և կլոր, անձրևաջրով լիքը փոսերի:

Թվում եր, թե մի ահագին խլուրդ հենց նոր փորփրել է այդ դատարկ ու հանդարտ դաշտը:

— Այս արկերն են արել — արկերից է, — գլխի ընկավ Կոլկան: — Արկն ընկնում է գետնի վրա, պայթում է և ահա քեզ փոս: Իսկ սրանք խրամատներ են: Կռվի ժամանակ զինվորներն այստեղ են թաքնվում:

— Շատ կեղտոտ է, Կոլկա,—տարակուսանքով նայելով թաց, ցեխոտ առվին, ասաց Նյուրկան:— Այստեղ վոր թաքնվես, ամբողջովին կտեղավորվես:

Այդ ժամանակ Վասկան, վոր գտնվում եր մի փոքրիկ, սևացած, կարծես խանձված տերևներով թփի մոտ, դոչեց.

— Ահա, յես գտա, վո՛նց գտա:

Ցեվ նա մի ինչ վոր բան բռնած, վազեց նրանց մոտ:

Սկզբում յերեխաները կարծեցին, թե նա սունկ է բերում, իսկ յերբ մոտեցավ, նրանք տեսան, վոր այդ սունկ չէ, այլ անհավասար սուր ծայրերով մետաղի մի հատ կտոր:

— Սա արկի կտոր է, — կրկին գլխի ընկավ Կոլկան:

— Տուր ինձ, Վասկա: Դրա փոխարեն յես քեզ յերեք սունկ կտամ... Ապա մի ձեռք տուր, Նյուրկա, տես ի՞նչ ծանր է:

Սակայն Նյուրկան շտապով ձեռքը յետ քաշեց և անցավ Վասկայի յետևը:

— Ցա՛ծ դիր, Կոլենկա,— յերկչոտությամբ խնդրեց նա: — Թե չե հանկարծ կպայթի:

— Հիմար, — հանգստացրեց նրան Կոլկան:—Արդեն պայթել է: Առանց վառոդի ինչպե՞ս կպայթի: Տուր ինձ, Վասկա, — կրկին խնդրեց նա, —յես քեզ յերեք սունկ կտամ: Հենց վոր տուն հասնենք, մի հատ ել մեխով նետ կտամ:

— Սունկն ի՞նչ է վոր,— պատասխանեց Վասկան,

արկի կտորը խնամքով կողովի մեջ դնելով։ — Սունկը կուտես ու պրծավ–գնաց։ Չե՛, ավելի լավ է քեզ չըտամ, Կոլկա։ Թող ինձ մնա...

Նա լռեց, ապա ավելացրեց.

— Իսկ դու շուտ–շուտ կգաս, կնայես։ Հենց վոր խնդրես, կտամ, վոր նայես։ Ի՞նչ է, ախոսալու հո չե՞մ։ Վորքան կուզես՝ նայիր։

Նրանք մոտենում էին գյուղին։ Վո՛չ գյուղացիներ էին յերևում, վո՛չ յերեխաներ։ Խոզերը չէին խռխռացնում, կովերը չէին բառաչում, շները չէին հաչում, կարծես ամեն ինչ բնաջինջ եր յեղել։

— Ցես ասացի, վոր բոլորն այստեղից հեռացել են, — ասաց Կոլկան կամաց ձայնով։ — Միթե՞ կարելի յե այստեղ ապրել. տես ինչպիսի արկի փոսեր կան։

Մի քանի քայլ ել գնացին, կանգ առան և աչքերը չռեցին։ Միայն այժմ ուշադրությամբ նայեցին ու տեսան, վոր վոչ մի գյուղ չկա։ Ջրաղացն ել, յեկեղեցին ել, տնակներն ել չինված էին բարակ, ներկված տախտակներից, առանց պատերի ու տանիքների։

Կարծես թե մեկն ահագին մկրատով հիանալի նըկարներ ե կտրտել և կանաչ դաշտի մեջ կպցրել հենարաններին։

— Ա՛յ քեզ գյուղ։ Ա՛յ քեզ ջրաղաց, — գոչեց Վասկան։ — Իսկ մենք մտածում...

Ցերեխաները ծիծաղելով մտան խաղալիք–գյուղը։ Զորս կողմը բարձր խոտ եր աճել։ Խաղաղ եր։ Իշամեղուները զզզում էին, փայլուն թիթեռները՝ թռչկոտում։

Ցերեխաները վազվզում էին ներկված տնակների շուրջը, ամեն կողմից նայելով նրանց։ Հենց այստեղ, մոտիկում, սյուներ էին տնկված, վորոնց ծանր, հաստ տախտակներ էին մեխված, տեղ–տեղ այդ տախտակներն արկերից կոտրտված ու ճեղքված էին։ Սրանք նշաններ էին, վորոնց կրակում էին հրետանավորները։ Խարուսիկ գյուղի առջև յերկու շարքով ձգվում էին խրամատներ, վորոնք շրջապատված էին ժանգոտված փշալարով։

Շուտով յերեխաները հասան մի ինչ վոր նկուղի։ Նկուղի դուռը կիսաբաց եր։ Նրանք վախվխելով քարե աստիճաններով ցած իջան և հայտնվեցին մի խոր, քարե մառանում։ Մառանում մի նստարան կար։ Պատի վրա դարակ կար, դարակի վրա ցցված եր մի փոքրիկ մոմի կտոր։

— Մոմը վառենք, — առաջարկեց Կոլկան։ — Ցեռ լուցկի ունեմ։ Վերցրել եմ, վոր խարույկ վառենք։

Նա լուցկին հանեց, բայց այդ ժամանակ վերևից ձիերի դոփյուն լսեցին։

— Ավելի լավ ե վազենք տուն, — կամաց ձայնով առաջարկեց Նյուրկան։

— Իսկույն կվազենք։ Վերևում մարդ կա, հենց վոր դնա, կվազենք։ Թե չե կհայհոյեն, կասեն. «Ինչո՞ւ յեք այստեղ մտել»։

Դոփյունը վերջացավ։ Ցերեխաները դուրս յեկան մառանից և տեսան, թե ինչպես յերկու հեծելակ սյանալով հեռանում են։

— Աշտարակին նայիր,— ցույց տվեց Վասկան,— ա՛յ այն աշտարակին։ Մարդ ե բարձրացել այնտեղ։

Նայեցին, տեսան, վոր ճիշտ ե. աշտարակի գագաթին մարդ ե նստել և այստեղից փոքրիկ-փոքրիկ ծուխ չափ ե թվում։

Արդեն ուզում եյին վազել տուն, բայց Վասկան նվնվաց, թե իր արկի կտորը թողել ե մառանում։

Կրկին մտան։ Մոմը վառեցին։ Այժմ, աղոտ լույսով, կարելի յեր տեսնել մոխրագույն հաստ ցեմենտե պատերը և ամուր յերկաթե գերաններ դցած առաստաղը։

Հանկարծ մի խուլ, հեռավոր թնդյուն ցնցեց յերեխաներին։ Կարծես թե ուր վոր մի մեծ, ծանր գերան ընկավ գետնի վրա։

— Կոլկա՛, — շշուկով հարցրեց Նյուրկան, — այ ի՞նչ ե։

— Զգիտեմ,— նույնպես շշուկով պատասխանեց նա։

A 35680



Նրանք վախվխելով քարե աստիճաններով
ցած իջան:

Թնդյունը կրկնվեց։ Ցերեխաները լռեցին և վախ-վրխելով իրար կպան։ Վասկան բերանը բաց արած, դատած արկի կտորն ամուր բռնած, նայում էր Կոլկային։ Կոլկան մռայլվել էր, իսկ Նյուրկայի թշից մի արցունքի կաթիլ գլորվեց և նա խղճալի ձայնով, պատրաստ լաց լինելու, ասաց.

— Իսկ յես, Կոլկա, կարծում եմ... Ցես կարծում եմ, վոր այսոր իսկի յել չորեքշաբթի չե։

— Ցես ել, — հուսահատված ասաց Վասկան։

Ցեվ հանկարծ բարձրաձայն լաց յեղավ, նրա յետևից ել մնացածները...

Անկյունում կուչ յեկած յերկար ժամանակ լաց եյին լինում փորձանքի մեջ ընկած յերեխաները։ Վերևի թնդյունները չեյին դադարում — մեկ մոտենում էր, մեկ հեռանում։ Ցերբեմն մի քանի բոպե դադարում էր։ Այդպիսի բոպեներից մեկին Կոլկան վերև բարձրացավ, վոր դուռը փակի։ Բայց մոտիկից մի այնպիսի թընդյուն լսվեց, վոր Կոլկան յետ յեկավ, փորսող տալով հասավ անկյունը, վորտեղ Վասկան ու Նյուրկան հանդարտ լաց եյին լինում, և նստեց նրանց կողքին։ Մի քիչ լաց լինելուց հետո, նա կրկին վերև գնաց մառանի ծանր, յերկաթապատ դռան մոտ, փակեց և ներքև իջավ։

Թնդյունները միանգամից լռեցին և միայն թեթև դողդողումով, նման այն բանին, յերբ ցնցվում են տան պատերը, յերբ ծանր բեռնատար ավտոմոբիլ կամ տրամվայ է անցնում, կարելի յեր դլխի ընկնել, վոր ռումբերը պայթում են մոտիկ տեղում։

— Ռումբը մեզ չի հասնի, — դեռևս հեկեկալով, բայց արդեն իր ընկերներին հանգստացնելով, ասաց Կոլկան։ — Մենք, ա՛յ, ինչպիսի խոր տեղում ենք նստած։ Պատերն ել քարից են, առաստաղն ել յերկաթից.. Դու...մի՛ լացիր, Նյուրկա, դու ել մի՛ լացիր, Վասկա։ Ա՛յ, շուտով հրաձգությունը կվերջացնեն, այն ժամանակ դուրս կգանք և արագ կվազենք։

— Մենք... Մենք ա...ր...ա...գ կվազենք... — արտասուքը կուլ տալով ձայն տվեց Նյուրկան։

— Մենք այնպես... Մենք այնպես չափ կընկնենք, վոր միանգամից տուն կհասնենք, — ավելացրեց Վասկան։ — Տուն կվազենք և վոչ վոքի վոչինչ չենք ասի։

Մոմի կտորը վառվեց վերջացավ։ Բոցը բնաճարպի վերջին մնացորդը հալեց։ Պատրույդը վայր ընկավ ու կարմրեց։ Բոլորովին մթնեց։

— Կոլկա, — հեկեկաց Նյուրկան, մթության մեջ վորոնելով նրա ձեռքը, — դու այստեղ նստիր, թե չե յես վախենում եմ։

— Ցես ել եմ վախենում, խոստովանեց Կոլկան և լռեց։

Մառանում անդորրություն եր տիրում։ Միայն վերևից հազիվ լսվում եյին հաճախակի հարվածների խուլ արձագանքները, կարծես թե մեկը հսկա մուրճով դեռնին ծանր մեխեր ե խփում։

— Կո՛լկա, Վա՛սկա, — կրկին լսվեց Նյուրկայի խղճալի ձայնը։ — Ինչո՞ւ յեք լռել։ Առանց այն ել մութն ե, դուք ել լռում եք։

— Մենք լուռ չենք, — պատասխանեց Կոլկան։ — Մենք Վասկայի հետ մտածում ենք։ Դու ել նստիր ու մտածիր։

— Ցես իսկի ել չեմ մտածում,—ձայն տվավ Վասկան, — յես հենց այնպես նստել եմ։

Նա փնթփնթաց, պրպտեց, ձեռքը դիպավ մի վոտի։ Այդ վոտը բռնեց քաշեց։

— Այս քո վո՞տն ե, Նյուրկա։

— Իմն ե, — վոտը քաշելով աղաղակեց վախեցած Նյուրկան։

— Ի՞նչ ե վոր։

— Այն, վոր դու, —բարկացած ձայնով պատասխանեց Վասկան, — վոր դու քո վոտը դրեցիր կողովիս մեջ և սունկը ջարդեցիր։

Հենց վոր Վասկան սունկի անունը տվեց, միանգամից ուրախացան և՛ Կոլկան, և՛ Նյուրկան, և՛ ինքը, Վասկան։

— Ցեկեք խոսենք, — առաջարկեց Կոլկան, — կամ յեկեք յերգ ասենք։ Դու յերգիր, Նյուրկա, իսկ յես ու

Վասկան ձայն կպահենք։ Դու, Նյուրկա, բարակ ձայնով յերգիր, յես՝ սովորական, իսկ Վասկան՝ հաստ ձայնով։

Ցես չեմ կարող հաստ ձայնով յերգել, — հրաժարվեց Վասկան։— Իսայկան ե կարողանում, իսկ յես չեմ կարողանում։

— Դե՛, դու ել սովորական ձայնով յերգիր...Սկսի՛ր, Նյուրկա։

— Ցես դեռ չգիտեմ, թե ինչ յերգեմ, — շփոթվեց Նյուրկան։ — Ցես միայն մայրիկիս յերգը գիտեմ, վոր յերգում ե։

— Լա՛վ, մայրիկիդ յերգը յերգիր։

Լսվեց, թե ինչպես Նյուրկան քիթը մաքրեց, ձեռքը քսեց յերեսին, արտասուքի մնացորդները չորացրեց, հետո շրթունքները լիզեց ու յերգեց բարակ, դեռ մի քիչ ել ընդհատ ձայնով։

Կռիվ գնաց կազակը,
Տանը թողեց աղջկան,
Տանը թողեց յերեխան —
Իր պստլիկ աղջկան։

— Դե՛, յերգեցեք վերջին բառերը. «իր պստլիկ աղջկան», — հուշեց Նյուրկան։

Ցեվ յերբ Կոլկան ու Վասկան յերգեցին, Նյուրկան ավելի զիլ ու հանդարտ շարունակեց.

Այդ որվանից տարիներ
Գլորվեցին ու անցան,
Կազակները շատ վաղուց
Կռվից իրենց տուն դարձան։
Զկա միայն մի կազակ,
Բոլորից ել մոռացված,
Իմ կազակը սիրելի,
Ավա՛ղ, վաղուց սպանված...

Նյուրկան ավելի ու ավելի զիլ ձայնով ել յեր-

գում, իսկ Կոլկան ու Վասկան սովորական ձայնով կրկնում էին քառյակի վերջին տողերը: Եվ միայն այն ժամանակ, երբ վերևից ուժեղ թնդյուն լսվեց, յերեքի ձայներն էլ մի քիչ դողացին, բայց յերգն այնուամենայնիվ չկտրվեց:

— Լավ յերգ է, — գովեց Կոլկան, յերբ յերգը վերջացրին: — Այդպիսի յերգեր — կռվի, հերոսների մասին, — յես շատ եմ սիրում: Լավ յերգ է, միայն ինչ վոր տխուր է:

— Դա մայրիկիս յերգն է, — բացատրեց Նյուրկան: — Երբ հայրիկին պատերազմում սպանեցին, նա ամբողջ ժամանակ այդ յերգն էր յերգում:

— Իսկ մի թե՞, Նյուրկա, քո հայրը կազակ էր:

— Կազա՛կ: Միայն թե նա հասարակ կազակ չէր, այլ կարմիր կազակ: Մնացած բոլորը սպիտակ կազակներ էին, իսկ նա կարմիր կազակ էր: Դրա համար էլ սպիտակ կազակները նրան կտոր-կտոր արին: Երբ յես բոլորովին փոքրիկ էի, մենք հեռու՝ Կուբանումն էինք ապրում: Հետո, յերբ հայրիկիս սպանեցին, մենք այստեղ, գործարանը յեկանք, քեռի Ֆյոդորի մոտ:

— Նրան պատերազմո՞ւմն են սպանել:

— Պատերազմո՛ւմ: Մայրիկս պատմել է, վոր նա ինչ վոր զորամասում է յեղել: Եվ ահա, մի անգամ զորամասի պետն ասում է հայրիկիս և մի ուրիշ կազակի. «Ահա ձեզ մի ծրար: Սլացեք Ուստ-Մեդվեդիցկայա գյուղը, թող մեզ ոգնություն հասցնեն»: Սլանում են հայրիկս և մի ուրիշ կազակ: Արդեն նրանց ձիերը հոգնել էին, իսկ մինչև Ուստ-Մեդվեդիցկայա դեռ շատ հեռու յեր: Հանկարծ սպիտակ կազակները նկատում են և ընկնում նրանց յետևից: Սպիտակ կազակների ձիերը հանգստացած են լինում և՝ քիչ է մընում, վոր հասնեն: Այն ժամանակ հայրիկս ասում է մյուս կազակին. «Ա՛ռ, Ֆյոդոր, այս ծրարը և սլացիր, իսկ յես կամրջի մոտ կմնամ»: Կամրջի մոտ իջնում է, պառկում և սկսում սպիտակ կազակներին կրակել: Այնքան է կրակում, մինչև վոր սպիտակ կա-

զակները կողքի ծանծաղուտով անցնում են և կտոր-կտոր են անում հայրիկիս։ Իսկ Ֆյոդորը, այն մյուս կազակը, այդ ժամանակ հեռու չէ լինում, այնպես վոր նրան չեն հասնում։ Ահա թե ինչպիսի կազակ եր հայրը, — վերջացրեց Նյուրկան իր պատմությունը։

Մի ուժեղ թնդյուն ստիպեց յերեխաներին ճչալ։ Ցերևի քամին վերևի դուռը բացեց և պայթյունների վորոտները մառանը ներս մտան։

— Կոլկա՛, փա-կ-ի-ր, — կակազելով գոչեց Վասկան։

— Ինքդ փակիր, — պատասխանեց Կոլկան։ — Ցես արդեն մի անգամ փակել եմ։

— Փակի՛ր, Կոլկա, — բարձրաձայն հեկեկալով կրկնեց Վասկան։

— Ա՛խ, դուք, — անսպասելի կերպով վեր կենալով բացականչեց իր իսկ պատմությունից գրգռված Նյուրկան։ — Ա՛խ, դուք... — Նա յետ շպրտեց Վասկայի ձեռքը, հասավ վերևի դռանը, փակեց և նիգն էլ գցեց։

Վորոտը հանդարտվեց։

Նորից լռեցին և այդպես յերկար ժամանակ նստեցին։ Մինչև այն ժամանակ, յերբ Կոլկան, վորն իրեն մեղավոր եր համարում և փոքրիկ Վասկայի և Նյուրկայի առաջ, ասաց.

— Բայց չե՞ վոր վերևում այլևս չեն կրակում։

Ականջ դրին — վերևում հանգիստ եր։ Մի տասը րոպե ևս սպասեցին — նույնպես հանգիստ եր։

— Վազենք տուն, — ճչաց Կոլկան։

— Տո՛ւն, տո՛ւն, — ուրախացավ Վասկան։ — Նյուրկա, վեր կաց։

— Ցես վախենում եմ, — փնթփնթաց Նյուրկան։ — Իսկ յեթե նորից...

— Վազե՛նք, վազե՛նք, — միաձայն բացականչեցին Կոլկան ու Վասկան։ — Մի՛ վախենա, ենպես կվազենք վո՛ր...

Դուրս յեկան վերև։ Մթին մառանից դուրս գալուց հետո, որը փայլուն թվաց, ինչպես ինքն արեգակը։

Դեռ ու դեն նայեցին։

Ծանր փայտե վահանները, վոր դրված եյին մառանից վոչ այնքան հեռու, ջարդոտված եյին։

Ամեն տեղ տաշեղներ եյին թափված և սևին եյին տալիս փոսեր, վորոնց մոտ ցրված հողը դեռ չեր չորացել։

— Վազե՛նք, Նյուրկա։ Տո՛ւր, յես քո կողովը վերցնեմ,— սիրտ եր տալիս նրան Կոլկան։— Մենք արագ...

Խրամատների վրայից թռչելով, կտրված փշալարի միջից անցան և սարի տակով վազեցին։

Հաստլիկ Վասկան անսպասելի արագությամբ ամենից առաջ եր սլանում, մի ձեռքով կողովը, մյուս ձեռքով արկի թանկագին կտորը սեղմած։

Կոլկան ու Նյուրկան վազում եյին կողք-կողքի և Կոլկան ազատ ձախ ձեռքով ոգնում եր նրան տանելու մեծ, անճոռնի կողովը։

Նրանք արդեն իջել եյին զառիվայրից և այժմ վազում եյին թփուտների միջով, յերբ ոդը կրկին դողդողաց, թնդաց և ռումբը սլացավ և նրանց յետևին պայթեց։

Նյուրկան անսպասելի կերպով նստեց, կարծես թե վոտին արկի կտոր դիպավ։

— Փախչենք, Նյուրկա,— գոչեց Կոլկան, դեմ գցելով իր կողովը և նրա ձեռքից բռնելով։ — Կողովը դեն գցիր։ Վազենք։

Հրետանային դիտողը դիտանոցի հրապարակից թփուտի մեջ յերեք շարժվող կետ նկատեց։

«Ցերեվի այծեր են», մտածեց նա, հեռադիտակն աչքերին մոտեցնելով։ Բայց նայելուց հետո նա ախ քաշեց և վերցնելով հեռախոսի փողը, գոռաց, վոր մարտկոցը հրաձգությունը դադարեցնի։

Հեռադիտակով նա պարզ տեսավ, թե ինչպես, թփերի մեջ յերբեմն յերեվալով, յերբեմն անհայտանալով, դաշտով յերկու տղա և մի աղջիկ եյին վազում։



«Ցերևի այծեր են», մտածեց նա, հեռադիտակն աչքերին մոտեցնելով:

Տղաներից մեկն ամուր բռնել եր աղջկա ձեռքը: Մյուսը, վոտներով խճճվելով բարձր խոտերի մեջ և սայթաքելով, վազում եր մի քիչ յետեվից, ինչ վոր մի բան յերկու ձեռքով կրծքին սեղմած: Հետո նա տեսավ, թե ինչպես Թփերի յետեվից դուրս յեկան մարտկոցից ուղարկված յերկու հեծելակ և յերեխաների մոտ կանգ առնելով, ձիերից իջան:

Յերկու կարմիր բանակայինների ուղեկցությամբ յերեխաները հասան մարտկոցին: Հրամանատարը բարկացել եր, վոր ստիպված յեղան վարժական հրաձգությունը դադարեցնել, բայց յերբ տեսավ, վոր այդ բանում մեղավոր են յերեք սրտաճաք յեղած, լաց լինող յերեխաներ, չբարկացավ ու նրանց իր մոտ կանչեց:

— Ինչպե՞ս են սրանք շրջափակումն անցել,— հարցրեց նա:

Յերեխաները լուռ եյին: Յեվ նրանց փոխարեն պատասխանեց ուղեկցող բանակայիններից մեկը:

— Նրանք, ընկեր հրամանատար, անցել են վաղ առավոտյան, մինչև շրջափակելը: Իսկ հետո, յերբ մեր հեծյալ պարեկները հետախուզում եյին Թփերը, նրանք ասում են, թե մառանում նստած են յեղել: Յես կարծում եմ, վոր նրանք չորրորդ շերտափակում են Թաղնված յեղել: Հենց այն կողմից եյին վազում:

— Չորրորդ շերտափակո՞ւմ,— հարցրեց հրամանատարը: Յեվ մոտենալով Նյուրկային, սկսեց փաղաքշել նրան:

— Չորրորդ շերտափակո՞ւմ,— կրկնեց նա, դիմելով իր ոգնականին:—Բայց մենք հենց այդ տեղամասն եյինք գնդակոծում: Խե՜ղճ յերեխաներ: — Նա շոյեց Նյուրկայի գզգզված գլուխը և քնքշաբար հարցրեց:

— Փոքրիկ աղջիկ, ասա՛, դուք ինչո՞ւ եյիք այնտեղ գնացել:

— Մենք գյուղն եյինք գնացել,— պատասխանեց Նյուրկան կամաց:

— Մենք ուզում եյինք գյուղը տեսնել,—ավելացրեց Կոլկան:

— Մենք կարծում էինք, թե դա իսկական գյուղ է, իսկ այնտեղ միայն տախտակներ են,— վրա բերեց Վասկան:

Հրամանատարն ու կարմիր բանակայինները ժըպտացին: Հրամանատարը նայեց Վասկային, վորը մեջքի յետեվում ինչ վոր բան ուներ թաղցրած: — Այդ ինչ է ձեռքիդ:

Վասկան փնչացրեց, կարմրեց և լուռ դեպի հրամանատարը պարզեց արկի կտորը:

— Սա չի վերցրել, թփի տակ է գտել,—պաշտպանեց Վասկային Կոլկան:

— Թփի տակ գտա,— հանցավորի պես պատասխանեց Վասկան:

— Ինչի՞դ է պետք:

Հրամանատարը նորից ժպտաց, իսկ նրան շրջապատող կարմիր բանակայինները բարձր ծիծաղեցին: Բեվ Վասկան, վորը վոչ մի կերպ չեր կարողանում հասկանալ, թե ինչի վրա յեն ծիծաղում, խոժոռած պատասխանեց.

— Զե՞ վոր արկի այսպիսի կտոր վոչ վոք չունի, իսկ յես այժմ ունեմ:

— Դե՛, վազեցե՛ք,— ասաց նրանց հրամանատարը: — Ա՛խ, դուք, փոքրիկնե՛ր:

Նա յետ դարձավ, նայեց իր ծոցատետրին և գոչեց արդեն ուրիշ—բարձր ու խիստ—ձայնով.

— Բերրորդ թնդանոթը: Նշան 6–6, փողը՝ 6–2:

ԳրՀմփ—գրՀմփ—գրմփաց յերեխաների յետևից, յերբ նրանք թռչկոտելով, ուրախ, վոր հեշտ պրծան, դեպի տուն եյին սլանում: ԳրՀմփ—գրՀմփ...

Բայց դա այլևս սարսափելի չեր:

Հանգստյան որն Իսայկան իր հորՀետ յեկավ: Բերավ իր հրացանը, վոր խցանով եր խփում և սկսեց պարծենալ: Բեվ, տարորինակ բան, Վասկան այս անգամ իսկի յել չեր նախանձում, վոր Իսայկան հրացան ունի, իսկ ինքը՝ վոչ:

Մինչդեռ Կոլկան և Նյուրկան դիտում եյին ու գովում Իսայկայի հրացանը, Վասկան գնաց տուն, յետ

քաշեց այն արկղը, վորի մեջ կային մի կոտրած դանակ, գնդակներ—մեկը ծակված, մեծ, մյուսն առանց ծակի, փոքր,— մուրճ, յերեք մեխ, պտուտակներ և եղի ուրիշ բաներ: Այդ արկղից հանեց խնամքով փաթաթված արկի կտորը և բերավ Իսայկայի մոտ:

— Իսկ յես ահա թե ինչ ունեմ,—ասաց նա, տալով արկի կտորը:

Իսկ Իսայկան, հիմարաբար արդյոք, թե չուզենալով ցույց տալ, վոր ինքը զարմացավ, միայն անտարբեր նայեց արկի կտորին և ասաց.

— Այդ ի՞նչ է վոր: Մեր մառանում հին յերկաթ ինչքան ասես կա:

Վասկան մինչև անգամ չվիրավորվեց: Նա նայեց Կոլկային և Նյուրկային. նրանք խորամանկորեն ժպտացին և վազեցին այն տեղ, ուր սկսվում եր ռազմական դաշտը:

Հրետանավորները այդ որը չեյին յեկել: Ցերեխաներն Իսայկային ցույց տվին, թե վորտեղ են դրվում թնդանոթները, բացատրեցին, թե ինչու դաշտում փայտի դիտանոցներ կան: Պատմեցին, թե ինչ տարորինակ գյուղ կա սարի վրա, վորի մոտ և՛ խրամատներ կան և քարե, յերկաթե տանիքով մառան, վորը «շերտափակ» է կոչվում: Նրանք պատմեցին, թե ինչպես մտան շերտափակի մեջ և այնտեղ նստեցին, մինչև վոր հրաձգությունը վերջացավ:

Իսայկան հետաքրքրությամբ լսեց, իսկ յերբ նրանք պատմությունը վերջացրին, նա բավականին անտարբեր կերպով ասաց.

— Ափսոս, վոր յես ձեզ հետ չեմ յեղել: Թե չե յես ել այնտեղ կնստեյի: Գնանք չիլիկափայտ խաղանք:

Վասկան, Կոլկան և Նյուրկան կրկին ժպտացին:

Հիմա՛ր, հիմա՛ր Իսայկա: Նա կարծում է, թե շերտափակի մեջ նստելն այնքան հասարակ բան է, վորքան չիլիկափայտ խաղալը:

Նա դեռ վոչ մի անգամ թնդանոթի համազարկի ձայն չեր լսել: Նա պայթող ռումբի ծուխը և կրակը չեր տեսել: Նա չեր փակել շերտափակի ծանր դուռը,

Ինչպես Կոլկան ու Նյուրկան, նա ռումբի ծանր կտորը ձեռքին չեր վազել դաշտում, արկերի բացած խոռոչնե-րի վրայով։

Բեվ երբը վրա նայելով, Վասկան, Կոլկան և Նյուրկան ուրախ ու ներողամտաբար ծիծաղեցին բա-բի, հաստիկ Իսայկայի վրա, ինչպես մեծահասակները ծիծաղում են յերեխաների վրա։

Բեվ յերբ Իսայկան, այդ անհասկանալի ծիծաղից զարմացած ու նեղացած աչքերով նայեց նրանց, յերե-խաները բռնեցին նրա ձեռքերը և քաշ տվին չիլիկա-փայտ խաղալու։

ԱԿԱԴԵՄԻԱ

А. 1987 г.
Акт № 123
Вкладн л.

Լեզվ. խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաքանյան

Հրատ. 2979, Գլավ. լիազ. Կ—4607. Պատվեր 105, Տիրաժ 3000
Թուղթ 62×94, տպագրական 2 մամ., մեկ մամուլում 26880 նիշ,
հեղինակային 1¼ մամ.

Հանձնված է արտադրության 14 հունվարի, 1937 թ.
Ստորագրված է՝ տպելու 25 հունիսի, 1937 թ.

Պետհրատի տպարան, Երևան, Լենինի փողոց, 65.

Գին՝ 1 ռ. 20 կ.

Н3-3

А. ГАЙДАР
ЧЕТВЕРТЫЙ БЛИНДАЖ
ГИЗ СССР ЕРЕВАН

[14к]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220035680

A II 35680